

նուագածութիւնը, և միացնել զայն Արեւելքի և հայ ազգային երգերու ինքնաբերական հմայքին և անոնց նկարագիրն յատկանշող ամենէն աւելի ցայտուն թնկերներուն: Ասոնց հետ և յետոյ՝ պէտք է յիշել նաեւ անոնք՝ որոնց հետաքրքրական դաշնաւորումները պիտի լսենք այս իրիկուն. Սրուանձտեանց, Սիւնի և ներկայիս՝ Պր. Պարթեան, աշակերտ Վենսան տ'Էնտիի և մեր Գարոնցին, որուն գործերը կը վկայեն հայ արուեստին յարատեւ զարունը:

Ասոնք են ուրեմն, դարերու ընթացքին մէջ տեսնուած, այս երաժշտութեան տարրերը և իրական վիճակը, որոնցմէ ոմանք, շատաւիղ շատ հեռուոր անցեալի մը, ճոխացած են մինչեւ մեր օրերը: Ասոնք երաժիշտին կը թողուն յարատեւ անձկու-

Թրգ. Տ. Գ. ՈՍԿԵՍՆ

թիւն մը շատ պատկերաւոր մեկնութիւն մը տալու՝ այն կենդանի և հակադիր նրբաբաններուն՝ որոնք զարմանալիօրէն կը յատկանշեն հայու ոգին: Եւ աւելի շատ յարմար են վառ գոյներով ճոխացնելու եւրոպական երաժշտութիւնը, և այս տեսակէտով կ'արժէ որ միշտ աւելի ուսումնասիրուի ժամանակակից արուեստագէտներէն:

1. Բազմաթիւ կարեւոր մանրամասնութիւններ կը գտնուին հայ դպրոցի մասին զրուար հաւաստիքներով հաստատուած յօդուածներուն մէջ նշանաւոր երգչուհի Օր. Մ. Պապայեանի՝ Revue musicale-ի մէջ. (Փարիզ) - Օր. Պապայեան իր աշակերտներուն հետ նուիրուած է հայ արեւմտեան արուեստագէտ աշխարհին ծանօթացնել հայ երաժշտական արուեստը. նէ մին է վերաւոր նեցուկներէն՝ Կոմիտաս Վ. ի Բարեկամներու Ընկերութեան:

A. Gastoué

“ LE FOYER „ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեր ընթերցողները պիտի յիշեն փաստացի գրութիւնս «Աշտիշատ» ձեւի վաւերականութեան մասին՝ ուղղուած «Le Foyer»-ի խմբագրութեան, որ անարդար յարձակումով մը համարած էր Միխիլարեան Հարց մէկ սխալանքն հրապարակել, մինչ իրականին մէջ ինքն էր որ կը սայթաքէր. և մեր Հայրերն արդար հռչակելէ վերջ՝ ներքին համարած էի ինծի պահանջել «Le Foyer»-էն քիչ մ'աւելի գիտոթիւն՝ ուղիղը սխալ չհամարելու. և քիչ մ'ալ փափկանկատոթիւն՝ չմեղադրելու անարդարօրէն դէմքեր որոնց երախտաւորութիւնը մեծ է մեզի և մեր ազգին հանդէպ:

Կը համարիմ որ ոչ մէկ նախատինք կար այդ գրութեան մէջ. այլապէս առաջինը պիտի ըլլամ զայն յետո կոչելու: Եւ սակայն, «Le Foyer» Ապրիլի թիւով չէ կրցած թաքուն պահել վիրաւորանքն իր արժանապատուութեան. կը ցաւինք ըսելու, անկեղծօրէն, թէ ի միաս իրեն կը դառնայ այն վրէժխնդրութիւնը որուն յագեցում տալու համար կրկին անտեղի և անիրաւ յարձակումներ կը փորձէ - այս անգամ ուրիշ խնդիրներու մէջ, քանի որ «Աշտիշատ»-ի դատը կը սընցուց - արտայայտելով բացատրութիւններ որոնք երբեմն, տղայակաւ են, օր. որպէս թէ յատուկ դիտում ունենամ լուր «Կոչնակ»-ի կամ Պ. Գ. Ֆնտրլեանի դէմ, և միայն «Le Foyer»-ին դէմ գրեմ. կամ «Բանասէրի յաւակնութիւն» ունենամ. այլուր՝ անհիմն և ծիծաղական, ինչպէս օր. «Վենետիկցիներէն ոմանք զարմանալի յաւակնութիւնը ունին իրենք զիրենք և իրենց նախորդները անսխալական դաւանելու». յետոյ «աճաբարութիւն» և այլն. հուսկ անարդար և յանդուգն խօսք մը, օր. թէ «Հ. Ե. Փ. անբարեխղճօրէն հրատարակած է Եղծ Աղանդոցը» եւն: Գրական պայքարի մը նպատակը խնդրոյ մը փաստացի լուսաբանութիւնն է միայն, որուն ընթացքին նախատինք և յոխորտանք ոչ միայն աննպատակ են, այլ նաեւ առիթ զրգուութեան և կոտի և հասարակաց զգուանքին:

Այս տեսակէտով «Le Foyer» մեղապարտ կը թուի մեզի, սակայն նման զէնքով չէ որ իրեն պիտի պատասխանենք, այլ իր իսկ խոստովանութիւններով: Ան, յետ ստիպուելու ընդունիլ «Աշտիշատ» ձեւը, ինքզինքը կը չքմեղէ նախ խոստովանելով թէ «Մենք ոչ բանասէր ենք, ոչ լեզուաբան և ոչ պատմախոյզ», ուզելով ըսել թէ՛ Միխիլարեան

եանց հասցէին մեղադրանքի հեղինակը Պ. Գ. Ֆնտրլեանն էր՝ «Կոչնակ»-ի մէջ գրութեամբ մը, ուսկից մէջ բերած էր ինք այդ կարծիքը և ուրիշին յանցանքով սայթաքած:

Բայց թէ պարզ մէջբերում մը չէր այդ՝ ինք իսկ կը խոստովանի, թէ «Խրացոցիկը զայն», և իրաւամբ Ֆնտրլեանի պարզ խօսքերուն վրայ կ'աւելցնէ ինք թէ «Հմուտ և հնարամիտ բանասէրը այդ ուսումնասիրութեան մէջ ՇՍՏ ՀԱՄՈՁԻՉ կերպով ի վեր կը հսկէ»:

Հոս ներուի մեզի հարցնել թէ բանասիրութենէ չհասկցող խմբագիրը ինչպէս ըմբռնեց այդ ուսումնասիրութեան համոզիչ ըլլալը. իսկ եթէ չըմբռնեց՝ ինչո՞ւ չեշտեց թէ համոզիչ է:

Ֆնտրլեան որպէս բանասէր, ունենալով աւելի կամ նուազ փաստեր՝ կրնար կարծիք յայտնել, բայց դուք, յարգելի խմբագիր, բանասէր ըլլալով ինչպէս իւրացուցիք և զօրացուցիք ուրիշին կարծիքը: Բանասէրին՝ բանասիրական կարծիքը ներքին է, բայց երբ հրատարակագիրն ալ բանասէր կը ձեւանայ, իրաւունք չունի՞ր ձայն բարձրացնելու. «Կօչնակը վեր մի՛ ելլեր»:

Գուք ըսիք թէ «Ո՛չ բանասէր էք և ո՛չ և այլն». ինչո՞ւ ուրեմն Ձեր կարողութենէն վեր դաստան կ'ընէք «բանասիրական յաւակնութիւն» բառերով ուզելով զիս նախատել: Թողունք որ Ձեր վճռին կամ գնահատութեան չենք կրնար սպասել այդ մասին, քանի որ Ձեր չունեցած կողով զուր տեղ պիտի շանաք զմեզ կռուել, ու ծանր կամ թեթեւ յայտարարել: Անգամ մ'ալ կրկնեմք. Յարգելի խմբագրապետ «Le Foyer»-ի. Գուք «Ո՛չ բանասէր էք, ոչ լեզուաբան և ոչ պատմախոյզ». ուրեմն անտեղի է Ձեր վճիռը Ձեր չունեցած գիտութեան մասին. անտեղի է և անարդար է երբ զիս «անբարեխղճ իրատարակիչ» կ'անուանէք Եղծ Աղանդոցի. և ահա Ձեր երկրորդ սալարարումը զոր ուզած էիք որ մատուանէ:

Ապօրինի և անգիտակից ռժով զիս Եղծիկի անբարեխղճ հրատարակիչ անուանելէ վերջ կ'աւելցնէք. «Կը մաղթենք որ Հ. Ե. Փ. այս տողերուն մասին ալ բացատրութիւն պահանջէ»:

Մնանկ կամ ունայն խանութ յայրանք խնդրելն իմաստութիւն չէ: Ինչո՞ւ կը հակասէք, պարոն, և կամ կը կեղծէք ունենալ ցուցնելով զայն՝ զոր չունենալ խոստովանած էք հանդիսապէս: Աս ալ նոր սայթաքում մը չէ՞: Ինչո՞ւ կոյրկուրայն ողբ. Գուրեան Ս. ի կամ ուրիշներու ետեւէն քաշքուշելով անգիտակցօրէն դարձեալ կը սայթաքէք: Ժամանակին մատնանշած եմ այդ գրապարտութիւնը Բագրատունույ և ուրիշներու մասին. անոնք միշտ արդարացած են յամօթ զրապարտութիւնը Բայց Գուք, բարեկամ, ինչ հասկցած էք Եղծ Աղանդոցի հրատարակութեամբ: Գիտէ՞ք թէ ան պարզապէս նոր տպագրութիւն մ'է հինին վրայ. և եթէ տպագրական վրիպակ սպորած է - բան մը ուսկից գերծ չի կրնար մնալ մահկանացուի գործը - մենք զայն ուղիղ համարած ենք Ձեզի պէս. և եթէ մէկ երկու սրբագրութիւն ալ եղած է Եղծիկին մէջ յայտնուած նոր ձեւագրին վրայէն, պարզապէս զովութեան արժանի գործ մըն է ասի, որուն համար արդար էր որ շնորհակալ ըլլայիք, և ոչ թէ հակառակէիք: Բայց այս ամէն բանէն ինչ կը կարգացած էք ոչ-բանասէր, և ինչ իրաւունքով և ապացոյցներով հրաւեր կը կարգաք ինձ: Ե՛րբ կարգացած էք ընդարձակ ուսումնասիրութիւնս Եղծիկի մասին, կամ ինչ հասկցած էք անկէ (տես «Բագմավէպ» 1928-29, և 1930 Գեկտ.) Գուք որ բանասիրական մարզին մէջ ծոմ էք, ըսիք: Կը համարիմ որ կ'ըմբռնէք Ձեր անտեղի պահանջները, որակումները, որակումները, նախատինքները, որոնց մասին ներողամիտ ենք. և բարեկամօրէն պիտի յորդորենք որ եթէ բանասէր մը չէք՝ չխառնուիք նման հարցերու, որպէսզի տեղի չտաք սխալանքի կամ սայթաքումի՝ և հետեւաբար ոչ ալ Ձեզի անախորժ դիտողութիւններու, ինչպէս մերիներն եղան Ձեզի:

Ձոյգ դարերու աւանդութեամբ և ծրագրով սերած ու փարած են մեր Հարք և մենք մեր նախնեաց կտակած սրբազան աւանդին. ոչ մէկ ճիգ չենք խնայեր զայն մեր ազգին սրտին և հոգւոյն մօտեցնել և անով ապրեցնել և կերտել անմեռունակ՝ մեր ցեղը. հետեւաբար կը մեղանչէք երբ անբարեխղճօրէն կ'ենթադրէք, կամ մեր և մեր հարց վրայ անսխալականութեան դաւանութիւն մը կ'ենթադրէք, և հեզմանքով կը ծիծաղիք հոն՝ ուր սխալ մը գործած չեն. և եթէ դաւանութիւն մը կ'ենթադրէք, և հեզմանքով կը ծիծաղիք միայն մեր կարեկցութեան պիտի գործած ալ ըլլային՝ գոհ երթալով ժամանակին գիտութեան՝ միայն մեր կարեկցութեան պիտի արժանանային առանց երբեք զրկուելու սիրոյ և յարգանքի պաշտամունքէն որուն արժանի են:

Թոյլ տուէք, յարգելի պարոն, վերջին անգամ մ'ալ խնդրել Ձեզմէ՛ քիչ մը գիտոթիւն քիչ մ'ալ փափկանկատոթիւն:

Հ. Ե. Փ.